ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՅԾԵՄՆԻԿ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 13-րդ փողոցը՝ նրբանցքով, անվանակոչել հայ քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Այծեմնիկ Ուրարտուի անվամբ՝ «Այծեմնիկ Ուրարտուի փողոց», «Այծեմնիկ Ուրարտուի փողոց, 1-ին նրբանցք»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՅԾԵՄՆԻԿ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Այծեմնիկ Ուրարտուն (օրիորդական ազգանունը՝ Տեր-Խաչատրյան) ծնվել է 1899թ. սեպտեմբերի 15-ին Կարսում:

Նա մասնագիտական կրթություն ստացած առաջին հայ կին քանդակագործն է:

Սովորել է Թիֆլիսում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ընտանիքի հետ տեղափոխվել է Ստավրոպոլ, որտեղ մինչև ութերորդ դասարան սովորել է տեղի գիմնազիայում: 1918 թվականից հաճախել է Ստավրոպոլի Լիշչենկոյի նկարչական ստուդիան: 1921-1925 թվականներին սովորել է Բաքվի պետական բարձրագույն գեղարվեստական դպրոցում, հետագա կրթությունը շարունակել է Մոսկվայում: Առաջին անգամ ցուցադրվել է 1926 թվականին, Մոսկվայում՝ Ռուս քանդակագործների ընկերության (ՕՌՍ) ցուցահանդեսում («Անապաստանը», «Հանգիստ»): Այդ գործերով, որոնք առաջին անգամ ստորագրել է Ուրարտու կեղծանունով, քանդակագործուհին իրեն դրսևորել է իբրև իրականությունը ռեալիստորեն ընկալող, մարդկային մարմնաձևերի պլաստիկությունը նրբորեն վերարտադրող արվեստագետ:

1926 թվականին Ուրարտուն տեղափոխվել է Երևան, նպաստել Սովետական Հայաստանի մշակութային կյանքի և ազգային ռեալիստական քանդակագործության զարգացմանը: 1926-ական թվականների 2-րդ կեսից և 1930-ական թվականների սկզբին Ուրարտուն աշխատել է մոնումենտալ պրոպագանդայի բնագավառում: Այդ տարիներին կերտել է «Սասունցի Դավիթ»-ը (բրոնզ, 1935թ.), «Անուշ» (մարմար, 1938թ., երկուսն էլ՝ Հայաստանի ազգային պատկերասրահում), «Ալմաստը» (բրոնզ, 1937թ., Հ.Թումանյանի տուն-թանգարան, Երևան): Դրանք, ինչպես և նրա շատ այլ գործեր, քնարականության գծեր են ներմուծել հայ քանդակագործության մեջ: Ետպատերազմյան տարիներին մինչև 1960-ական թվականները Ուրարտուն զարգացրել է դիմաքանդակի ժանրը, կերտել մտավորականների, գյուղի և արտադրության մարդկանց կերպարներ: Վերջին աշխատանքներից է Մովսես Խորենացու արձանը (բրոնզ, 1962թ., Երևանի Մ.Մաշտոցի անվան Մատենադարան):

1956 թվականին Ուրարտուն արժանացել է ՍՍՀՄ վաստակավոր արվեստի գործչի, իսկ 1960-ին՝ Հայաստանի ժողովրդական նկարչի կոչման:

Այծեմնիկ Ուրարտուն մահացել է Երևանում 1974 թվականին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 13-րդ փողոցը՝ նրբանցքով, անվանակոչել հայ քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Այծեմնիկ Ուրարտուի անվամբ՝ «Այծեմնիկ Ուրարտուի փողոց», «Այծեմնիկ Ուրարտուի փողոց, 1-ին նրբանցք»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ
ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ
ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ
ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՅԾԵՄՆԻԿ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Այծեմնիկ Ուրարտուի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՅԾԵՄՆԻԿ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Այծեմնիկ Ուրարտուի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆ